Գնահատեք Փողի Արժեքը

- Արտարժութային փոխարժեքների, գործարքների անընդհատ թարմացումներ
- Ոսկու փոխարժեքների անընդհատ թարմացումներ
- ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող աճուրդներ
- ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվող աճուրդներ
- Բորսայում իրականացված գործարքներ
- Դրամային իրացվելիության ցուցանիշներ
- Բանկերի միջև ՀՀ դրամով և արտարժույթով վարկային գործառնություններ
- Ֆինանսատնտեսական նորություններ

«ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՇՎԵՀԱՄԱՐՆԵՐԻ ԿՈԴԱՎՈՐՄԱՆ» ԿԱՐԳԸ

Հավելված 4
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի հունիսի 7-ի թիվ 142-Ն որոշմամբ

Կ Ա Ր Գ

ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՇՎԵՀԱՄԱՐՆԵՐԻ ԿՈԴԱՎՈՐՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգում, ինչպես նաև ենթապահառուների մոտ կիրառվող դեպո հաշվեհամարների կոդավորման սկզբունքները:
2. Սույն կարգի իմաստով՝
1) Պարտատոմս՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազորած մարմնի կողմից թողարկված պարտատոմսեր և այլ արժեթղթեր, որոնց հաշվառումը իրականացվում է համակարգի կողմից:
2) Համակարգ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ:
3) Մասնակից՝ համակարգում դեպո հաշիվ ունեցող անձ:
Համակարգի մասնակիցներ են՝
ա. Պահառու՝ Կենտրոնական բանկ,
բ.Թողարկող՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը,
գ. Ենթապահառու
դ. Ենթապահառու չհանդիսացող բանկեր և այլ մասնակիցներ (Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ):
4) Պահառու՝ թողարկողի առջև պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման պարտավորությունները կրող, պարտատոմսերի թողարկման գլոբալ հավաստագիրը պահող և հաշվառող, պահառուական գործունեություն իրականացնող ենթակառուցվածք, որը վարում է համակարգի մասնակիցների դեպո հաշիվները: Պահառուի գործառույթներն իրականացնում է Կենտրոնական բանկը:
5) Ներդրող՝ պարտատոմսերի սեփականատեր հանդիսացող և ենթապահառուի մոտ պատատոմսերի դեպո հաշիվ ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձ:
6) Ենթապահառու՝ պահառության գործունեություն իրականացնող անձ, որը վարում է ներդրողների դեպո հաշիվները: Սույն կարգի իմաստով՝ ենթապահառու են՝ պահառուի հետ ենթապահառության պայմանագիր ստորագրած ներդրումային ծառայություններ մատուցող անձինք, Գանձապետական պահառուն և «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա»

ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կենտրոնական դեպոզիտարիա): Գանձապետական պահառուն և Կենտրոնական դեպոզիտարիան ենթապահառուական ծառայություններ մատուցում են միայն ներդրողների համար:

7) Դեպո հաշիվ՝ պարտատոմսերի հաշվառման համար նախատեսված պահառուի/ենթապահառուի գրառումների բազմություն, որը միավորված է ընդհանուր հատկանիշներով:
8) Ակտիվային դեպո հաշիվ՝ դեպո հաշիվ, որում պարտատոմսերը հաշվառվում են ըստ պահպանման տեղի:
9) Պասիվային դեպո հաշիվ՝ դեպո հաշիվ, որում պարտատոմսերը հաշվառվում են ըստ պատկանելության:
10) Անալիտիկ դեպո հաշիվ՝ դեպո հաշիվ, որում հաշվառվում են առանձին մասնակցի կամ ներդրողի իրավունքները բոլոր թողարկումների պարտատոմսերի նկատմամբ, որոնք ունեն միևնույն կարգավիճակը (պասիվային հաշիվների համար), կամ որում հաշվառվում են բոլոր թողարկումների պարտատոմսերն ըստ պարտատոմսերի առանձին պահպանման տեղի (ակտիվային հաշիվների համար):
11) Ենթահաշիվ՝ անալիտիկ հաշվի ներքո բացված հաշիվ, որում հաշվառվում են տվյալ կարգավիճակի առանձին թողարկման պարտատոմսերը: Ենթահաշիվը դեպո հաշվառման նվազագույն անբաժանելի միավորն է:
12) Կենտրոնական բանկ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:

3. Պարտատոմսերի հաշվառումն իրականացվում է պահառուի և ենթապահառուների մոտ վարվող համապատասխան դեպո հաշիվներով՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի պահառության գործունեության կարգի» համաձայն:

ԳԼՈՒԽ 2. ՊԱՀԱՌՈՒԻ ՄՈՏ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՆԱԼԻՏԻԿ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

4.Անալիտիկ հաշվառման նպատակով պահառուի մոտ բացվում են անալիտիկ հաշիվներ (ակտիվային և պասիվային):

1) Պահառուի մոտ կիրառվում են դեպո հաշիվների հետևյալ տեսակները՝

ա. Պահառուի հաճախորդների սեփական պարտատոմսերի դեպո հաշիվներ (ենթապահառուի, ենթապահառու չհանդիսացող առևտրային բանկերի սեփական պարտատոմսերի դեպո հաշիվներ).

բ. ենթապահառուի ներդրողներին պատկանող պարտատոմսերի ամփոփ դեպո հաշիվներ.

գ. թողարկողի դեպո հաշիվներ.

դ. պահառուի դեպո հաշիվներ.

ե. Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ Պահառուի հաճախորդ հանդիսացող այլ մասնակիցների դեպո հաշիվներ:

5. Հաշվեհամարների կառուցվածքը եւ դրանց տարրերի կոդերը:

Հաշվեհամարներն ունեն հետևյալ կառուցվածքը՝

Հաշիվ			
X1X2X3X4X5	X6	X7	X8
I	II	III	IV

Հաշվեհամարների կառուցվածքում ՝		
I	X1X2X3X4X5-- նիշերը	հաշվետիրոջ կոդն է
II	X6-- նիշը	կարգավիճակի կոդն է
III	X7-- նիշը	դեպո հաշվի տեսակի կոդն է
IV	X8-- նիշը	ստուգիչ նիշն է

6. Հաշվետիրոջ կոդը տրվում է պահառուի կողմից՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգի մասնակիցների, վերջիններիս հաճախորդների հաշվեհամարների, ինչպես նաև տեղեկատվական համակարգերի մասնակիցների կոդավորման կարգի» համաձայն:

X6-X7 նիշերը թվային են (0-9 թվեր):

7. Ստուգիչ նիշը հաշվարկվում է Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով (հավելված 1, կցվում է):

1) Հաշվեհամարների կառուցվածքի տարրերը (նիշերը) կարող են ընդունել հետեյալ կոդերը.

Հաշիվ			
X1X2X3X4X5	X6	X7	X8
I	II	III	IV

Հաշվեհամարների կառուցվածքում՝		
I	Հաշվից կախված ընդունում է հետեյալ կոդերը	- Պահառուի կոդ - Թողարկողի կոդ -Պահառուի մոտ՝ ենթապահառուի, ենթապահառու չհանդիսացող առևտրային բանկի եւ այլ մասնակցի կոդ -Կենտրոնական բանկի որպես երկրորդային շուկայի մասնակցի կոդ
II	Հաշվից կախված ընդունում է հետեյալ կարգավիճակ ները	«Ընդունված հաշվառման» կարգավիճակ - 0 «Տեղաբաշխման ենթակա պարտատոմսեր» կարգավիճակ - 1 «Հետ գնված պարտատոմսեր» կարգավիճակ - 2 «Մարված պարտատոմսեր» կարգավիճակ – 3 «Ազատ» կարգավիճակ – 4 «Գրավով սահմանափակված» կարգավիճակ - 5 «Արգելադրված (կալանված)» կարգավիճակ – 6 «Գրավադրված արգելադրված (կալանված)» կարգավիճակ – 8
III	Հաշվից կախված ընդունում է հետեյալ հաշվի	«Պահառուի պարտատոմսեր» հաշիվների խմբի իդենտիֆիկատորի կոդ- 0 «Թողարկողի պարտատոմսեր» հաշիվների խմբի

	տեսակի կոդը	իդենտիֆիկատորի կոդ-1 «Սեփական պարտատոմսեր» հաշվի տեսակի կոդ – 2 «Ներդրողներին պատկանող պարտատոմսեր» ամփոփ դեպո հաշվի տեսակի կոդ – 3 «Ռեպո գործարքների ապահովվածության համար պետական արժեթղթեր» հաշվի տեսակի կոդ – 4 «Հակադարձ ռեպո գործարքների կատարման համար պետական արժեթղթեր» հաշվի տեսակի կոդ – 5
IV	Ստուգիչ նիշ:	

ԳԼՈՒԽ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ԴԵՊՈ ՀԱՇԻՎՆԵՐԸ

8. Թողարկողի դեպո հաշիվ՝ պասիվային հաշիվ է, որը բացում և վարում է պահառուն՝ թողարկողի կողմից թողարկված պարտատոմսերը հաշվառելու համար:

9. Պարտատոմսերը հաշվառվում են ըստ հետևյալ կարգավիճակով հաշիվների (X6 մասնիկը)՝

1) տեղաբաշխման ենթակա պարտատոմսեր՝ պարտատոմսեր, որոնք թողարկողի կողմից թողարկվել են և ներկայացված են տեղաբաշխման համար,
2) հետ գնված պարտատոմսեր՝ պարտատոմսեր, որոնք հետ են գնվել թողարկողի կողմից մինչև մարման օրը,
3) մարված պարտատոմսեր՝ պարտատոմսեր, որոնք դուրս են եկել շրջանառությունից, և որոնց դիմաց հասանելիք գումարը վճարվել է:

10. Թողարկողի դեպո հաշիվներն ունեն հետևյալ կառուցվածքը՝

Հաշիվ			
X1 X2 X3X4X5	X6	X7	X8
*	**	***	****

* Թողարկողի կոդ
** «Տեղաբաշխման ենթակա պարտատոմսեր» կարգավիճակ - 1
«Հետ գնված պարտատոմսեր» կարգավիճակ - 2
«Մարված պարտատոմսեր» կարգավիճակ - 3
*** «Թողարկողի պարտատոմսեր» հաշիվների խմբի իդենտիֆիկատոր -1

**** Ստուգիչ նիշ:

ԳԼՈՒԽ 4. ՊԱՀԱՌՈՒԻ ԴԵՊՈ ՀԱՇԻՎԸ

11. Պահառուի դեպո հաշիվ՝ ակտիվային հաշիվ է, որտեղ հաշվառվում է թողարկողի կողմից թողարկված և պահառուի կողմից հաշվառման վերցված պարտատոմսերի ծավալը: Ընդ որում, թողարկված պարտատոմսերի հանրագումարը պետք է համընկնի գլոբալ հավաստագրերում (կամ թողարկողի հրամաններում) նշված պարտատոմսերի ընդհանուր ծավալի հետ:
12. Պահառուի դեպո հաշիվն ունի հետևյալ կառուցվածքը՝

Հաշիվ			
X1 X2 X3X4X5	X6	X7	X8
*	**	***	****

* Պահառուի կոդ - 10500
** «Ընդունված հաշվառման» կարգավիճակ - 0
*** «Պահառուի պարտատոմսեր» հաշիվների խմբի իդենտիֆիկատոր - 0
**** Ստուգիչ նիշ:

ԳԼՈՒԽ 5. ՊԱՀԱՌՈՒ ՄՈՏ ԵՆԹԱՊԱՀԱՌՈՒՆԵՐԻ, ԵՆԹԱՊԱՀԱՌՈՒ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԴԵՊՈ ՀԱՇԻՎՆԵՐԸ

13. Պահառուի մոտ յուրաքանչյուր ենթապահառուի համար վարվում է 2 տեսակի դեպո հաշիվ՝ ենթապահառուի սեփական պարտատոմսերի դեպո հաշիվ և տվյալ ենթապահառուի ներդրողներին պատկանող պարտատոմսերի ամփոփ դեպո հաշիվ: Ընդ որում.
1) Ենթապահառու չհանդիսացող առևտրային բանկերի համար վարվում է միայն իրենց սեփական պարտատոմսերի դեպո հաշիվ,

2) Կենտրոնական դեպոզիտարիայի և Գանձապետական պահառուի համար բացվում է միայն ներդրողներին պատկանող պարտատոմսերի ամփոփ դեպո հաշիվ,
3) Այլ մասնակիցների համար դեպո հաշիվները բացվում են Կենտրոնական բանկի խորհրդի որոշման համաձայն՝ ըստ սույն կետում նշված հաշիվների տեսակների:

14. Պահառուի մոտ՝ ենթապահառուի, ենթապահառու չհանդիսացող առեւտրային բանկի և այլ մասնակցի, ինչպես նաև Կենտրոնական բանկի որպես երկրորդային շուկայի մասնակցի դեպո հաշիվն ունի հետեւյալ կառուցվածքը.

1) Պահառուի մոտ՝ ենթապահառուի, ենթապահառու չհանդիսացող առեւտրային բանկի և այլ մասնակցի դեպո հաշիվը ունի հետեւյալ կառուցվածքը

Հաշիվ			
X1X2X3X4X5	X6	X7	X8
I	II	III	IV

Որտեղ՝		
I		-Պահառուի մոտ՝ ենթապահառուի, ենթապահառու չհանդիսացող առևտրային բանկի եւ այլ մասնակցի կոդը
II	Սույն հաշվի համար ընդունում է հետեւյալ կարգավիճակները	«Ազատ կարգավիճակ – 4 «Գրավով սահմանափակված» կարգավիճակ - 5 «Արգելադրված (կալանված)» կարգավիճակ – 6 «Գրավադրված արգելադրված (կալանված)» կարգավիճակ – 8
III	Սույն հաշվի համար ընդունում է հետեւյալ հաշվի տեսակի կոդը	«Սեփական պարտատոմսեր» հաշվի տեսակի կոդ – 2 «Ներդրողներին պատկանող պարտատոմսեր» ամփոփ դեպո հաշվի տեսակի կոդ – 3
IV	Ստուգիչ նիշ:	

2) Կենտրոնական բանկի դեպո հաշիվը որպես երկրորդային շուկայի մասնակցի, ունի հետեյալ կառուցվածքը.

Հաշիվ			
X1X2X3X4X5	X6	X7	X8
I	II	III	IV

Որտեղ՝		
I		Կենտրոնական բանկի՝ որպես երկրորդային շուկայի մասնակից - կոդը
II	Սույն հաշվի համար ընդունում է հետեյալ կարգավիճակները	«Ազատ կարգավիճակ – 4 «Գրավով սահմանափակված» կարգավիճակ - 5 «Արգելադրված (կալանված)» կարգավիճակ – 6 «Գրավադրված արգելադրված (կալանված)» կարգավիճակ – 8
III	Սույն հաշվի համար ընդունում է հետեյալ հաշվի տեսակի կոդը	«Սեփական պարտատոմսեր» հաշվի տեսակի կոդ – 2 «Ներդրողներին պատկանող պարտատոմսեր» ամփոփ դեպո հաշվի տեսակի կոդ – 3 «Ռեպո գործարքների ապահովվածության համար պետական արժեթղթեր» հաշվի տեսակի կոդ – 4 «Հակադարձ ռեպո գործարքների կատարման համար պետական արժեթղթեր» հաշվի տեսակի կոդ – 5
IV	Ստուգիչ նիշ:	

15. Պարտատոմսերի հաշվառումն իրականացվում է ըստ հետևյալ կարգավիճակով հաշիվների (X6 մասնիկը)՝

1) «ազատ» կարգավիճակում համարվում են այն պարտատոմսերը, որոնց հետ գործառնությունների իրականացման սահմանափակում չկա,
2) «գրավով սահմանափակված» կարգավիճակում համարվում են այն պարտատոմսերը, որոնք գրավադրված են գրավատուի կողմից (համաձայն գրավադրման/ պայմանագրի),
3) «արգելադրված (կալանված)» կարգավիճակում համարվում են ազատ պարտատոմսերը, որոնց օգտագործման վրա արգելանք է դրված դատարանի որոշմամբ (դատավճռով):
4) «գրավադրված արգելադրված (կալանված)» կարգավիճակում համարվում են գրավադրված պարտատոմսերը, որոնց օգտագործման վրա արգելանք է դրված դատարանի որոշմամբ (դատավճռով):

ԳԼՈՒԽ 7. ԵՆԹԱՀԱՇԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

16. Յուրաքանչյուր անալիտիկ հաշվի ներքո բացվում են ենթահաշիվներ՝ ըստ յուրաքանչյուր թողարկման պարտատոմսերի:
Ենթահաշիվները կազմված են տվյալ պարտատոմսի 12-նիշանոց պետական գրանցման համարի 3-րդից մինչև 12-րդ նիշերը ներառյալ (առաջին երկու նիշերը ներկայացնում են երկիրը (ԷյԷմ (AM)) և ենթահաշիվների մեջ չեն ներառվում)՝ ընդամենը 10 նիշ (արժեթղթի ունիկալ համարը և ստուգիչ նիշը):

ԳԼՈՒԽ 8. ԵՆԹԱՊԱՀԱՌՈՒԻ ՄՈՏ ՎԱՐՎՈՂ ԴԵՊՈ ՀԱՇԻՎՆԵՐԸ

17. Ենթապահառուի մոտ պարտատոմսերը հաշվառելու նպատակով բացվում են դեպո հաշիվներ՝ ըստ առանձին ներդրողների և ենթապահառուի սեփական պարտատոմսերի դեպո հաշիվ: Ենթապահառուի մոտ բացվող դեպո հաշիվների երկարությունը 13 նիշ է, որոնք պարտադիր են: Գործարքների կատարման հանձնարարականներում, ինչպես նաև հաղորդագրությունների ֆորմատների համապատասխան դաշտերում նշվում են տվյալ ենթապահառուի սեփական պարտատոմսերի և/կամ տվյալ ենթապահառուին պատկանող ներդրողի (ներդրողների) 13-նիշանոց դեպո հաշիվները:
18. Ենթապահառուի մոտ վարվող դեպո հաշիվներն ունեն հետևյալ կառուցվածքը՝

Հաշիվ

X1X2X3X4X5	X6	X7X8 X9 X10X11X12	X13
*	**	***	****

* Ենթապահառուի կոդ
** Հաշվի կարգավիճակ՝
*** Տվյալ ենթապահառուի ներդրողի կոդ
**** Ստուգիչ նիշ

X6 մասնիկը կարող է ունենալ հետևյալ կոդերը՝

4 ազատ
5 գրավով սահմանափակված
6 արգելադրված (կալանված)
7 առևտրի համար նախատեսված
8 գրավադրված արգելադրված (կալանված)

X7X8X9X10X11X12 - տվյալ ենթապահառուի ներդրողի կոդն է, որը տրվում է ենթապահառուի կողմից, ընդ որում.

X7X8 մասնիկները ցույց են տալիս ներդրողի տեսակը.

X7 մասնիկը ցույց է տալիս ներդրողի կարգավիճակը՝

1 ռեզիդենտ ներդրողներ,
2 ոչ ռեզիդենտ ներդրողներ,

X8 մասնիկը ցույց է տալիս ներդրողի խումբը ըստ պատկանելության՝

1 բանկային հաստատություններ,
2 արժեթղթերի շուկայի մասնակիցներ (այդ թվում՝ ներդրումային ֆոնդեր),
3 ֆինանսավարկային կազմակերպություններ (ոչ բանկային հաստատություններ),
4 այլ իրավաբանական անձ,
5 այլ ֆիզիկական անձ:

Ներդրողների կոդը տրվում է ենթապահառուի կողմից: Յուրաքանչյուր ենթապահառու ինքն է որոշում իր ներդրողների կոդերի կառուցվածքը՝ հաշվի առնելով, որ ներդրողի կոդը չի կարող հավասար լինել «000000», որն արտացոլում է ենթապահառուին պատկանող սեփական պարտատոմսերը:

X13- ստուգիչ նիշն է, որը հաշվարկվում է համաձայն սույն կարգի հավելված 1:

19. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից, որպես ենթապահառու՝ բացվող ենթահաշիվների կառուցվածքը կարող է տարբերվել սույն կարգով ենթապահառուի մոտ վարվող դեպո հաշիվների համար սահմանված կառուցվածքից: Սակայն Կենտրոնական դեպոզիտարիան առնվազն ապահովում է.

1) Հաշվառման իրականացումը՝ ըստ ներդրողների եւ վերջիններիս պետական արժեթղթերի եւ դրանց կարգավիճակի,
2) պետական պարտատոմսերի հաշվառումը անվանական ծավալով,
3) Կենտրոնական բանկի համակարգերով գործառնությունների կատարման ժամանակ տվյալ համակարգում կիրառվող հաղորդագրությունների համար

Կենտրոնական բանկի կողմից սահմանված սկզբունքով հաղորդագրությունների կիրառումը, այդ թվում անհրաժեշտ տեսքով հաշիվների ներկայացումը:

Պետական արժեթղթերի հաշվառման և
հաշվարկների համակարգում կիրառվող
հաշվեհամարների կոդավորման կարգի
Հավելված 1

Ստուգիչ նիշի ձևավորման ալգորիթմը

Ստուգիչ նիշի հաշվարկման ժամանակ իրականացվում են հետևյալ հաջորդական քայլերը՝

1. Լատինական այբուբենի յուրաքանչյուր տառին համապատասխանում են թվային արժեքներ՝ սկսած 10-ից՝

A=10	G=16	M=22	S=28	Y=34
B=11	H=17	N=23	T=29	Z=35
C=12	I=18	O=24	U=30	
D=13	J=19	P=25	V=31	
E=14	K=20	Q=26	W=32	
F=15	L=21	R=27	X=33	

2. Հաշվեհամարի նիշերից յուրաքանչյուրը բազմապատկվում է իրեն համապատասխանող կշռային գործակցով (1 և 2 թվերով):
3. Բազմապատկման արդյունքները գումարվում են, ընդ որում, յուրաքանչյուր նիշ գումարվում է որպես առանձին թիվ (տես օրինակը):
4. Ստուգիչ նիշը ստանալու համար գումարման արդյունքում ստացված թվին հաջորդող և առանց մնացորդի 10-ին բաժանվող թվից հանվում է վերոհիշյալ գումարման արդյունքը:

Բազմապատկման արդյունքների գումարման արդյունքում առանց մնացորդի 10-ին բաժանվող թիվ (օրինակ 30, 40 և այլն) ստանալու դեպքում ստուգիչ նիշը հավասար է 0-ի:

Հաշվեհամարի ստուգիչ նիշի հաշվարկ՝

Օրինակ 1. 121002795823K

1	2	1	0	0	2	7	9	5	8	2	3	K	"	*Կոդ*
x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x		"	*(բազմապատկում)*
1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2		"	*կշռային գործակիցներ*
1	4	1	0	0	4	7	18	5	16	2	6		"	*բազմապատկման արդյունքներ*

1+4+1+0+0+4+7+1+8+5+1+6+2+6=46

K=50-46=4

Հաշվեհամարը՝ 1210027958234

Օրինակ 2. 214001000000K

2	1	4	0	0	1	0	0	0	0	0	0	K	"	*Կոդ*
x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x		"	*(բազմապատկում)*
1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2		"	*կշռային գործակիցներ*
2	2	4	0	0	2	0	0	0	0	0	0		"	*բազմապատկման արդյունքներ*

2+2+4+0+0+2+0+0+0+0+0+0=10

Քանի որ գումարման արդյունքում ստացված թիվը (10) առանց մնացորդի բաժանվում է 10-ի, ստուգիչ նիշը հավասար է 0-ի:

Հաշվեհամարը՝ 2140010000000

Ստուգիչ նիշի ստուգման ալգորիթմ

Հաշվեհամարում ստուգիչ նիշի ստուգումն իրականացվում է հետևյալ հաջորդական քայլերի միջոցով՝

1. Հաշվեհամարի նիշերը (ներառյալ՝ ստուգիչ նիշը) բազմապատկվում են իրենց համապատասխանող կշռային գործակցով (2 և 1 թվերով):
2. Բազմապատկման արդյունքները գումարվում են, ընդ որում յուրաքանչյուր նիշ գումարվում է որպես առանձին թիվ (տես օրինակ):

Եթե ստացված արդյունքն առանց մնացորդի բաժանվում է 10-ի, ապա ստուգիչ նիշը ճիշտ է հաշվարկված:

Օրինակ՝ 1210027958234

1	2	1	0	0	2	7	9	5	8	2	3	4	"*Կոդ*
x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	"*(բազմապատկում)*
1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	"*կշռային գործակիցներ*
1	4	1	0	0	4	7	18	5	16	2	6	4	"*բազմապատկման արդյունքներ*

1+4+1+0+0+4+7+1+8+5+1+6+2+6+4=50

Քանի որ գումարը (50) առանց մնացորդի բաժանվում է 10-ի, ստուգիչ նիշը ճիշտ է հաշվարկված: